

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.12.2020թ. թիվ 2012040543 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<02>> 02 2021թ. 7-13- 4191

ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Տիգրան Հովհաննիսյանի ՄԴ/5511-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Միկոյան փողոցի 2/2 շենքի 277 բնակարանի բնակիչ Տիգրան Հովհաննիսյանը դիմումով խնդրել է բեկանել վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011774396, 2011905246, 2011843341 և 2012040543 որոշումները՝ նշելով, որ իրավախախտումները կատարել է բարեգործական նախաձեռնության շրջանակներում և պաշտպանության նախարարության կարիքների համար:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2012040543 որոշումը ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները: Ըստ նույն հոդվածի 2-րդ մասի՝ որպես իրավախախտումը հիմնավորող ապացույց վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում կարող են օգտագործվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված ապացույցները:

<<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը թեև սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն է կատարել, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ մի այնպիսի վտանգ վերացնելու համար, որը սպառնացել է պետական կամ հասարակական կարգին, սոցիալիստական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին, կառավարման սահմանված կարգին, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարելի վերացնել այլ միջոցներով և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ավելի նվազ կարևորություն ունի:

<<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> օրենքի 43-րդ հոդվածի 3-րդ մասի համատեքստում, երբ վարչական մարմնի կողմից քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ տվյալներին (տեղեկություններին) վարչական մարմինը կարող է իրազեկ դառնալ բացառապես տվյալ անձի միջոցով, ապա ապացուցման պարտականությունը դրվում է այդ անձի վրա:

Վարչական վարույթի ընթացքում ստեղծված նյութերի ուսումնասիրությամբ չի հիմնավորվել դիմումատուի կողմից ճանապարհային երթևեկության կանոնի խախտումը ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարելու հանգամանքը ոչ բավարար ապացույցների պատճառով, հետևաբար թիվ 2012040543 որոշումը ենթակա չէ բեկանման:

Հարկ է նշել նաև, որ << Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Ինչ վերաբերվում է ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին թիվ 2011774396, 2011843341, 2011905246 որոշումներին, ապա դիմումատուի կողմից բաց է թողնվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 288-րդ հոդվածով նախատեսված՝ վերը նշված որոշման դեմ գանգատ տալու 30-օրյա ժամկետը, ուստի դիմումը դրանց մասով քննարկման ենթակա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ << օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 21.12.2020թ. թիվ 2012040543 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել << վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Տիգրան Հովհաննիսյանին:

